ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարային շրջանի, 2-րդ կիսամյակի դասերի և հեռակա բաժիններում՝ 1-ին կիսամյակի քննաշրջանի վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
2. ԳՊՀ ֆակուլտետների մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարային շրջանի, 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման մասին:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
3. ԳՊՀ իրականացրած՝ «Պատմություն» «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» «Հաշվապահական հաշվառում», «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի՝ արտաքին փորձագետի ներգրավմամբ ներքին աուդիտի գործընթացի վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ՄԿԾ ղեկավարներ/
4. ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:
/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

5.Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – ԳՊՀ ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարային շրջանի, 2-րդ կիսամյակի դասերի և հեռակա բաժիններում՝ 1-ին կիսամյակի քննաշրջանի վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

   Զեկուցողները ներկայացրեցին համապատասխան ֆակուլտետներում բակալավրիատի առկա բաժինների 1-ին կիսամյակի լուծարային շրջանի արդյունքները, ուսանողների առաջադիմության և հաճախելիության վերաբերյալ ամփոփ տվյալներ, ինչպես նաև 2-րդ կիսամյակի դասապրոցեսի մեկնարկի կազմակերպչական աշխատանքները:

2. **Լսեցին** – ԳՊՀ ֆակուլտետների մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարային շրջանի, 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի,

գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեց ամփոփ տեղեկատվություն համապատասխան ֆակուլտետների մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարային շրջանի ընթացքի, 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի մեկնարկի վերաբերյալ: Ընդգծվեցին գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների կարևորությունն ու անհրաժեշտ համակարգումը ֆակուլտետների և ՄԿԾ-ն սպասարկող համապատասխան ամբիոնների կողմից:

3. **Լսեցին** – ԳՊՀ իրականացրած՝ «Պատմություն» «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» «Հաշվապահական հաշվառում», «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի՝ արտաքին փորձագետի ներգրավմամբ ներքին աուդիտի գործընթացի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ՄԿԾ ղեկավարներ/

Պրոռեկտորը և ՄԿԾ ղեկավարները ներկայացրեցին մասնագիտական կրթական ծրագրերի՝ արտաքին փորձագետի ներգրավմամբ իրականացված ներքին աուդիտի արդյունքները: Քննարկվեց ներքին աուդիտի շրջանակում բացահայտված ուժեղ և թույլ կողմերը, արտաքին փորձագետների դիտարկումները և ՄԿԾ-ների հետագա բարելավման քայլերը:

4. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեցին ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացիկ ցուցանիշները, հատկապես՝ հունվար-փետրվար ամիսների կտրվածքով: Քննարկվեցին ուսման վարձերը հավաքագրելու ուղղությամբ ուսանողների հետ տարվող բացատրական աշխատանքների ձևաչափերը և փոխհամագործակցության մեխանիզմները դեկանատների հետ:

5. **Լսեցին**– Ընթացիկ հարց:

ԳՊՀ կազմակերպչական և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Քննարկվեցին համալսարանի կազմակերպչական և ընթացիկ աշխատանքների հետ կապված մի շարք հարցեր՝ մասնավորապես՝

նյութատեխնիկական հագեցվածության, ուսումնական լսարանների բարեկարգման վերաբերյալ:

Որոշեցին.

1. Ապահովել ԳՊՀ ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպումը՝ ըստ հաստատված ուսպլանների և դասացուցակների:
2. Ֆակուլտետների կողմից վերահսկել մագիստրտուրայի ուսանողների գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման ընթացքը և գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պարբերաբար ներկայացնել հաշվետվություն:
3. «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հաշվապահական հաշվառում» և «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի արտաքին փորձագետի ներգրավմամբ իրականացված ներքին աուդիտի արդյունքներն ընդունել ի գիտություն և ներկայացնել ԳՊՀ գիտական խորհրդին: Հանձնարարել տվյալ կրթական ծրագրերի ղեկավարներին՝ մշակել ՄԿԾ-ների բարելավման գործողությունների ծրագրեր:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, 1-ին կիսամյակի լուծարային շրջանի և հեռակա բաժիններում՝ 1-ին կիսամյակի քննաշրջանի վերաբերյալ:
   /Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
2. ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների, 1-ին կիսամյակի լուծարային շրջանի մասին:
   /Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
3. ԳՊՀ 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ:
   /Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
4. ԳՊՀ-ում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակում վերապատրաստման դասընթացների կազմակերպման մասին:
   /Զեկուցողներ՝ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ, ամբիոնների վարիչներ/

5. ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

6. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** – ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, 1-ին կիսամյակի լուծարային շրջանի և հեռակա բաժիններում՝ 1-ին կիսամյակի քննաշրջանի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին ուսումնական գործընթացի կազմակերպման, հեռակա բաժիններում քննաշրջանների անցկացման, ինչպես նաև առկա բաժինների ուսանողների լուծարային շրջանի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

2. **Լսեցին** – ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների, 1-ին կիսամյակի լուծարային շրջանի մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին մագիստրատուրայի ուսումնական պլաններով նախատեսված դասընթացների և պրակտիկաների անցկացման ժամկետները, ինչպես նաև լուծարային շրջանի կազմակերպման ընթացքը:

3. **Լսեցին** – ԳՊՀ 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման հետ:

4. **Լսեցին** – ԳՊՀ-ում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակում վերապատրաստման դասընթացների կազմակերպման մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ, ամբիոնների վարիչներ/

Ներկայացվեցին վերապատրաստման դասընթացների թեմաները, դասավանդողների ցանկը:

5. **Լսեցին** - ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեց ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման, ուշացումների և չվճարումների ցուցանիշները:

6. Լսեցին– Ընթացիկ հարց:

Քննարկվեցին ուսումնական, վարչական և կազմակերպչական ընթացիկ հարցեր:

Որոշեցին.

1. Ապահովելով ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2-րդ կիսամյակի դասերի, 1-ին կիսամյակի լուծարային շրջանի և հեռակա բաժիններում՝ 1-ին կիսամյակի քննաշրջանի պատշաճ իրականացումը՝ սահմանված կարգին և ժամանակացույցին համապատասխան:
2. Ամբիոնների կողմից հսկողություն ապահովել մագիստրատուրայում գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների անցկացման նկատմամբ և պարբերաբար հաշվետվություններ ներկայացել ընթացքի վերաբերյալ:
3. Հետևել ԳՊՀ առկա և հեռակա բաժինների բակալավրիատի ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքին և ապահովել սահմանված ժամկետներում դրանց ներկայացումը:
4. Հաստատել ներկայացված վերապատրաստման դասընթացների թեմաները և ապահովել դրանց իրականացումը՝ ընդգրկելով հնարավորինս շատ մասնակիցների:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, առկա բաժիններում 1-ին կիսամյակի լուծարային շրջանի և հեռակա բաժինների քննաշրջանի վերաբերյալ:

   /Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
2. ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների, 1-ին կիսամյակի լուծարային շրջանի մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

3. ԳՊՀ 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

4. ԳՊՀ-ում «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն» «Հաշվապահական հաշվառում», «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ինքնավերլուծության խմբի անդամներ/

5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին –** ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, առկա բաժիններում 1-ին կիսամյակի լուծարային շրջանի և հեռակա բաժինների քննաշրջանի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին ուսումնական գործընթացի կազմակերպման, հեռակա բաժիններում քննաշրջանների անցկացման, ինչպես նաև առկա բաժինների ուսանողների լուծարային շրջանի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

2. **Լսեցին –** ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների, 1-ին կիսամյակի լուծարային շրջանի մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի դասընթացների, պրակտիկաների և լուծարային շրջանի կազմակերպման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** - ԳՊՀ 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման վերաբերյալ:

4. **Լսեցին** - ԳՊՀ-ում «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն» «Հաշվապահական հաշվառում», «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ինքնավերլուծության խմբի անդամներ/

Ներկայացվեցին և քննարկվեցին ՄԿԾ-ների ներքին աուդիտի արդյունքները, ինչպես նաև արտաքին փորձագետների կողմից վերհանված ուժեղ կողմերն ու բարելավման ենթակա ոլորտները, ներկայացված առաջարկությունները:

5. Լսեցին– Ընթացիկ հարց:

ԳՊՀ ‹‹learn.gsu.am›› էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա բաժնի կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների ներկայացում:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ք. Հայրապետյան/

Ներկայացվեցին ԳՊՀ ‹‹learn.gsu.am›› էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա բաժնի կրթական ծրագրերի թերի և բացակայող առարկայական տիրույթների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

Որոշեցին.

1. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, առկա բաժիններում 1-ին կիսամյակի լուծարային շրջանի և հեռակա բաժինների քննաշրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. ԳՊՀ ֆակուլտետների առկա բաժնի 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասընթացները, հեռակա բաժնի 1-ին կիսամյակի քննաշրջանը և լուծարային շրջաններն անցկացնել սահմանված ժամանակացույցին և կարգին համապատասխան:
3. Իրականացնել ԳՊՀ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Հաշվապահական հաշվառում», «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտ:
4. Ապահովել ԳՊՀ ‹‹learn.gsu›› էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա բաժնի կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների համալրման աշխատանքների կատարումը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
Քարտուղար Ք. Հայրապետյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասերի, միջանկյալ քննությունների ընթացքի և հեռակա բաժինների 2025թ. ուստարվա 1-ին կիսամյակի լուծարային շրջանի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

2. ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

3. ԳՊՀ 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման, բակալավրիատում նախաավարտական պրակտիկաների ընթացքի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, մասնագիտական կրթական ծրագրերի և պրակտիկաների ղեկավարներ/

4. ԳՊՀ-դպրոցներ կապերի ակտիվացման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ԱՔԲ վարիչ Օ. Ղազարյան/

5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** - ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասերի, միջանկյալ քննությունների ընթացքի և հեռակա բաժինների 2025թ. ուստարվա 1-ին կիսամյակի լուծարային շրջանի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին առկա բաժիններում 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասերի և միջանկյալ քննությունների կազմակերպման ընթացքը:

2. **Լսեցին** - ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին մագիստրատուրայի ընթացիկ ուսումնական գործընթացի կազմակերպման, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների իրականացման և ուսանողների ներգրավվածության մասին

ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** - ԳՊՀ 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման, բակալավրիատում նախաավարտական պրակտիկաների ընթացքի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, մասնագիտական կրթական ծրագրերի և պրակտիկաների ղեկավարներ/

Քննարկվեցին ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքները՝ ներառյալ հանձնաժողովների կազմերի հաստատման, ժամանակացույցի հստակեցման և կազմակերպչական գործընթացների համակարգման հարցերը, ինչպես նաև նախաավարտական պրակտիկաների ընթացիկ արդյունքները:

4. **Լսեցին** - ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ԱՔԲ վարիչ Օ. Ղազարյան/

Ներկայացվեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ տարվող աշխատանքները, քննարկվեցին համագործակցության նոր ձևաչափեր: Առաջարկվեց շարունակել մասնագիտական կողմնորոշման դասընթացների ու բազմաբնույթ միջոցառումների կազմակերպումը՝ այդ աշխատանքներում ներգրավելով ԳՊՀ բարձր առաջադիմություն ունեցող և եվրոպական բուհերում սովորած ուսանողներին:

5. **Լսեցին**– Ընթացիկ հարց:

ՀՀ Գեղարքունիքի մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ համագործակցության վերաբերյալ:

/ Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ /

Ներկայացվեց տեղեկատվություն ՀՀ Գեղարքունիքի մարզի միջնակարգ և ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար մասնագիտական կողմնորոշման դասընթացներ կազմակերպելու վերաբերյալ:

Որոշեցին.

1. ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների արդյունքներն ընդունել ի գիտություն և ձեռնարկել բարելվման միջոցառումներ:

2. Հանձնարարել ԳՊՀ ակադեմիական քաղաքականության և որակի ապահովման բաժիններին՝ կազմակերպել դասալսումներ, գնահատել դասավանդման որակը, ձեռնարկել միջոցառումներ՝ ուսուցման արդյունավետության և որակի բարձրացման ուղղությամբ:
3. ԳՊՀ ուսանողների պրակտիկաների ընթացքում ի հայտ եկած խնդիրները քննարկել ֆակուլտետների խորհրդի նիստերում և ձեռնարկել պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը միտված միջոցառումներ:
4. Սահմանված ժամանակացույցին համապատասխան իրականացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների գործընթացը:
5. ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար շարունակել կազմակերպել մասնագիտական կողմնորոշման դասընթացներ ու միջոցառումներ՝ այդ աշխատանքներում ներգրավելով ԳՊՀ բարձր առաջադիմություն ունեցող և եվրոպական բուհերում սովորած ուսանողներին:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5
ՕՐԱԿԱՐԳ

1. Եվրոպական միության՝ ‹‹Էրազմուս+ KPI4HE. Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» ծրագրի շրջանակում, ս. թ. մարտի 25-ից 28-ը Ջենովայի համալսարանում կայացած աշխատաժողովի արդյունքների մասին:

   /Զեկուցողներ՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ծրագրի աշխատանքային խմբի անդամներ/
2. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, առաջին միջանկյալ քննությունների, ավարտական կուրսերի ուսանողների պրակտկաների ընթացքի, հեռակա բաժիններում առաջին լուծարային շրջանի արդյունքների վերաբերյալ:

   /Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

3. ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների, թեզերի նախապաշտպանության և արտաքին գրախոսման ներկայացման մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

4. ԳՊՀ-ում «Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի ներքին փորձաքննության անցկացման, «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագետի այցելության արդյունքների վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ինքնավերլուծության խմբի անդամներ/

5. ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

6. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – Եվրոպական միության՝ ‹‹Էրազմուս+ KPI4HE. Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» ծրագրի շրջանակում ս. թ. մարտի 25-ից 28-ը Ջենովայի համալսարանում կայացած աշխատաժողովի արդյունքների մասին:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ծրագրի աշխատանքային խմբի անդամներ/

Ներկայացվեցին Եվրոպական միության՝ ‹‹Էրազմուս+ KPI4HE. Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» ծրագրի նպատակները, ԳԱՑԱՇ-ի ստեղծման փուլերը, աշխատաժողովի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները և հետագա քայլերը:

2. **Լսեցին** – ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, առաջին միջանկյալ քննությունների, ավարտական կուրսերի ուսանողների պրակտկաների ընթացքի, հեռակա բաժիններում առաջին լուծարային շրջանի արդյունքների վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, միջանկյալ քննությունների ընթացքի,

ավարտական կուրսերի պրակտիկաների կազմակերպման և հեռակա բաժինների առաջին լուծարային շրջանի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

3. **Լսեցին** – ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների, թեզերի նախապաշտպանության և արտաքին գրախոսման ներկայացման մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին մագիստրատուրայի ընթացիկ ուսումնական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքները, թեզերի նախապաշտպանության և արտաքին գրախոսման ներկայացման վերաբերյալ տեղեկատվություն:

4. **Լսեցին** – ԳՊՀ-ում «Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի ներքին փորձաքննության անցկացման, «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագետի այցելության արդյունքների վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ինքնավերլուծության խմբի անդամներ/

Պրոռեկտորը և ՄԿԾ-ները սպասարկող ամբիոնի վարիչները ներկայացրեցին մասնագիտական կրթական ծրագրերի՝ արտաքին փորձագետի մասնակցությամբ իրականացված ներքին աուդիտի արդյունքները, քննարկվեցին «Համակարգչային ճարտարագիտություն» ՄԿԾ-ի արտաքին փորձագետի այցելության արդյունքները, ներկայացված առաջարկությունները:

5. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեց ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

6. **Լսեցին**– Ընթացիկ հարց:

ԳՊՀ 28-րդ գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Ներկայացվեց, որ ԳՊՀ 28-րդ գիտաժողովին մասնակցության հայտ են ներկայացրել 20-ից ավելի բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ: Արդյունքում ծրագրում ներառվել է ավելի քան 100 զեկուցում:

Որոշեցին.

1. ԳՊՀ իրականացրած «Պատմություն» և «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի արտաքին փորձագետի ներգրավմամբ իրականացված ներքին աուդիտի արդյունքներն ընդունել ի գիտություն և ներկայացնել ԳՊՀ գիտական խորհրդին: Հանձնարարել տվյալ կրթական ծրագրերի ղեկավարներին՝ մշակել ՄԿԾ-ների բարելավման գործողությունների ծրագրեր:
2. Սահմանված կարգով իրականացնել մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսման աշխատանքները, հավաքագրել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարների, ավարտական աշխատանքների ներքին գրախոսների կարծիքները:
3. Ապահովել ամփոփիչ ատեստավորման գործընթացը՝ սահմանված կարգով և ժամանակացույցի համապատասխան:
4. ԳՊՀ 28-րդ գիտաժողովի զեկուցումների ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի ապրիլի 25-ը և հետևել բովանդակային և տեխնիկական պահանջների պահպանմանը:
5. Շարունակել աշխատանքներն ուսանողների շրջանում՝ ֆինանսական կարգապահության բարձրացման ուղղությամբ:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, հեռակա բաժիններում՝ լուծարային շրջանի արդյունքների և ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման վերաբերյալ:
   /Զեկուցողներ՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան, ԲՏՖ փոխդեկան Մ. Գարեյան/
2. ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների արդյունքների և թեզերի նախապաշտպանության կազմակերպման մասին:
   /Զեկուցողներ՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան, ԲՏՖ փոխդեկան Մ. Գարեյան/
3. ԳՊՀ-ում կրթության որակի ներբուհական ապահովման կառուցակարգերի վերաբերյալ:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

4. ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի, հեռակա բաժիններում՝ լուծարային շրջանի արդյունքների և ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան, ԲՏՖ փոխդեկան Մ. Գարեյան/

Զեկուցողները ներկայացրեցին ամփոփ տեղեկություններ առկա բաժինների ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների հաճախումների վերաբերյալ: Շեշտվեց, որ դասապրոցեսն ընթանում է հաստատված դասացուցակների և ուսումնական պլանների համաձայն, դասերի ընթացքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է շարունակական հիմունքներով: Ներկայացվեցին նաև հեռակա բաժիններում լուծարային շրջանի արդյունքները: Քննարկվեցին ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական միջոցառումները, կազմակերպման ժամկետները:

2. **Լսեցին** – ԳՊՀ մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների արդյունքների և թեզերի նախապաշտպանության կազմակերպման մասին:

/Զեկուցողներ՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան, ԲՏՖ փոխդեկան Մ. Գարեյան/

Ներկայացվեցին մագիստրատուրայի ուսումնական գործընթացը, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների արդյունքները, ինչպես նաև մագիստրոսական թեզերի նախապաշտպանության կազմակերպման վերաբերյալ տվյալներ:

3. **Լսեցին** – ԳՊՀ-ում կրթության որակի ներբուհական ապահովման կառուցակարգերի վերաբերյալ:

/Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

Զեկուցողը ներկայացրեց ԳՊՀ-ում որակի ապահովման գործող մեխանիզմների ամփոփ նկարագիրը, դրանց համապատասխանությունն ազգային և ոլորտային չափանիշներին, ինչպես նաև բուհում կրթության որակի ապահովման ուղղությամբ բարելավման առաջարկները:

4. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեցին ուսման վարձերի հավաքագրման ընթացքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների: Զեկուցողը շեշտեց, որ թեև հավաքագրման ցուցանիշներն ընդհանուր առմամբ բավարար են, անհրաժեշտ է շարունակել վերահսկողությունը և ուսանողների իրազեկման աշխատանքները:

5. Լսեցին – Ընթացիկ հարց:

Քննարկվեցին ուսումնական գործընթացին և վարչական կազմակերպչական աշխատանքներին առնչվող հարցեր:

Որոշեցին.

1. ԳՊՀ բակալավրիատի հեռակա բաժիններում լուծարային շրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն և աշխատանքներ իրականացնել ուսանողների հետ՝ առաջադիմության բարձրացման նպատակով:
2. Ապահովել ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման գործընթացի հստակ կազմակերպում՝ սահմանված ժամկետների պահպանմամբ: ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնին՝ սահմանված ձևաչափով պատրաստել և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներին տրամադրել ամփոփիչ ատեստավորման արձանագրությունների մատյանները:
3. Ապահովել ԳՊՀ կրթության որակի ապահովման կառուցակարգերի լիարժեք կիրառումը ամփոփիչ ատեստավորման գործընթացում:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման մասին:
   /Զեկուցողներ՝ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/
2. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պլանների կատարման և հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան, տեղակալներ Մ. Գարեյան, Ռ. Սարգսյան/

3. ԳՊՀ 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության նախապատրաստական աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

4. ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի՝ 2025-2026 ուստարվա ուսումնական պլանների մշակման աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

5. ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

6. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** – ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին ամփոփ տվյալներ բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում ամփոփիչ ատեստավորման ընթացքի վերաբերյալ: Նշվեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններն անցկացվել են հաստատված ժամանակացույցերի համաձայն: Հատուկ ուշադրություն է դարձվել գնահատման օբյեկտիվության ապահովմանը:

2. **Լսեցին** – ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պլանների կատարման և հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան, տեղակալներ Մ. Գարեյան, Ռ. Սարգսյան/

Ներկայացվեցին տվյալներ ուսումնական պլանների կատարողականի վերաբերյալ՝ ըստ մասնագիտությունների և կուրսերի: Քննարկվեցին հեռակա բաժիններում հաջորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները՝ դասացուցակների կազմումը, էլեկտրոնային ուսուցման ռեսուրսների համալրումը և ուսանողների իրազեկման միջոցառումները:

3. **Լսեցին** – ԳՊՀ 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության նախապատրաստական աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Զեկուցողը ներկայացրեց մագիստրատուրայի ընդունելության ժամանակացույցը, դիմորդների փաստաթղթերի ընդունման կարգը և հարցաշարերի պատրաստման ընթացքը: Ընդգծվեց, որ գործընթացը կիրականացվի օբյեկտիվության սկզբունքով՝ ներգրավելով ԳՊՀ ավարտական կուրսերի լավագույն շրջանավարտներին:

4. **Լսեցին** – ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի՝ 2025-2026 ուստարվա ուսումնական պլանների մշակման աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Ներկայացվեց ուսումնական պլանների մշակման ընթացքը՝ հիմնվելով Որակավորումների ազգային շրջանակի պահանջների, ԳՊՀ ռազմավարական ծրագրի և շուկայի աշխատանքի արդի պահանջների վրա: Արձանագրվեց, որ ամբիոնները ներկայացրել են նախնական առաջարկություններ, որոնք կքննարկվեն և կհաստատվեն առաջիկա նիստերում:

5. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Զեկուցողը ներկայացրեց ուսման վարձերի հավաքագրման վիճակագրությունը՝ ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների: Ընդգծվեց, որ չնայած ընդհանուր դրական միտումներին, առկա են որոշ ուսանողներ, ովքեր ունեն ժամկետանց պարտքեր, և անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ վերահսկողություն:

6. **Լսեցին –** Ընթացիկ հարց:

Քննարկվեցին էլեկտրոնային ուսուցման՝ «learn.gsu.am», հարթակում հեռակա ուսուցման մասնագիտությունների համար նախատեսված առարկայական տիրույթների առկա, թերի կամ բացակա էլեկտրոնային ռեսուրսների լրացման հարցը:

Որոշեցին.

1. ԳՊՀ ֆակուլտետների հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը կազմակերպել սահմանված ժամանակացույցին համապատասխան, վերահսկել ուսանողների հաճախումները, դասերի կատարողականը:
2. 2025-2026 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլը կազմակերպել բակալավրիատում ամփոփիչ ատեստավորման գործընթացի ավարտից հետո՝ ընդգրկելով ԳՊՀ բակալավրիատի՝ բարձր առաջադիմությամբ շրջանավարտներին:
3. Ուսումնական պլանների և մասնագրերի բարելավման համար կազմակերպել քննարկումներ՝ ըստ ամբիոնների և ֆակուլտետների:

4. Ապահովել ուսման վարձերի հավաքագրումը՝ կիրառելով իրազեկման համալիր միջոցառումներ:
5. Իրականացնել «learn.gsu.am» հարթակի թերի կամ բացակա ռեսուրսների համալրում:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ 2025-2026 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության մասին:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովի անդամներ/
2. ԳՊՀ բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի ընթացքի վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
3. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի մասին:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
4. ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ:
/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/
5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – ԳՊՀ 2025-2026 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության մասին:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովի անդամներ/

Ներկայացվեց ԳՊՀ 2025-2026 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ ըստ մասնագիտությունների:

2. **Լսեցին** – ԳՊՀ բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի ընթացքի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին, որ հեռակա բաժիններում դասերը կազմակերպվում են ըստ դասացուցակի: Զեկուցողները նաև անդրադարձան ուսանողների հաճախումների ցուցանիշներին՝ նշելով, որ առկա են դրական միտումներ, սակայն որոշ մասնագիտություններում անհրաժեշտ է խթանել ուսանողների ակտիվ մասնակցությունը և կատարել լրացուցիչ վերահսկողական միջոցառումներ:

3. **Լսեցին** – ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի վերաբերյալ ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ուանողներին ֆինանսական աջակցման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

5. Լսեցին- Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ գիտական ամենամյա՝ 28-րդ գիտաժողովի հերթական պրակի գիտական հոդվածների հավաքագրման վերաբերյալ:

/Զեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Զեկուցողը նշեց, որ ԳՊՀ գիտական ամենամյա՝ 28-րդ գիտաժողովի հերթական պրակի գիտական հոդվածների հավաքագրումն ընթացքի մեջ է, ներկայացված հոդվածները հղվել են համապատասխան ամբիոններին՝ գրախոսելու համար:

Որոշեցին.

1. Մագիստրատուրայի ընդունելության գործընթացն իրականացնել սահմանված ժամանակացույցին և պահանջներին համապատասխան:
2. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանը կազմակերպել սահմանված կարգին և հաստատված ժամանակացույցին համապատասխան:
3. Աշխատանքներ տանել ուսանողների շրջանում՝ ուսման վարձերի ամենամսյա պարբերականությամբ հավաքագրման նպատակով:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ 2025-2026 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության մասին:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովի անդամներ/
2. ԳՊՀ բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի ընթացքի վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
3. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի մասին:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
4. Եվրոպական միության «Էրազմուս + Վիրտուալ ճանապարհորդությունների միջոցով ընդգրկուն կարողությունների ձեռքբերում» ծրագրի մեկնարկի մասին:
/Զեկուցող՝ ԳՊՀ ԱԿԼ բաժնի վարիչ Լ. Թոռչյան/
5. ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:
/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/
6. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – ԳՊՀ 2025-2026 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության մասին:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովի անդամներ/

Ներկայացվեցին ամփոփ տվյալներ ԳՊՀ 2025-2026 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության, դիմորդների փաստաթղթերի հավաքագրման և ամբողջականացման գործընթացի վերաբերյալ:

2. **Լսեցին** – ԳՊՀ բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի ընթացքի վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեց, որ ԳՊՀ բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա 2-րդ կիսամյակի դասերն ընթանում են ըստ դասացուցակի, ուսանողների հաճախումները վերահսկվում են պատասխանատուների կողմից, միջանկյալ քննությունների ժամանակացույցերը կազմված են և տեղեդրված են ԳՊՀ կայքէջում:

3. **Լսեցին –** ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին ԳՊՀ առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին ուսանողների մասնակցության վերաբերյալ ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին** – Եվրոպական միության «Էրազմուս+ Վիրտուալ ճանապարհորդությունների միջոցով ընդգրկուն կարողությունների ձեռքբերում» ծրագրի մեկնարկի մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ԱԿԼ բաժնի վարիչ Լ. Թոռչյան/

Զեկուցողը ներկայացրեց ծրագրի նպատակները՝ ընդգծելով, որ այն ուղղված է ուսանողների և դասախոսների միջազգային համագործակցության ընդլայնմանը և թվային հմտությունների կատարելագործմանը: Նշվեց, որ ծրագրի շրջանակում կկազմակերպվեն առցանց սեմինարներ, փոխանակման նախագծեր և միջազգային մասնագետների ներգրավմամբ դասընթացներ:

5. **Լսեցին –** ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման մասին

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեց ուսման վարձերի հավաքագրման վիճակագրական տվյալները՝ ըստ ֆակուլտետների: Ընդգծվեց, որ չնայած ընդհանուր դրական միտումներին, առկա են ժամկետանց պարտքեր, առաջարկվեց շարունակել ուսանողների իրազեկման և ուսման վարձերի վճարումների կարգապահության վերահսկման գործողությունները:

6. **Լսեցին- Ընթացիկ հարցեր:**

ԳՊՀ հեռակա բաժնի ավարտական կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների ներկայացման վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետի դեկաններ/

Որոշեցին.

1. Մագիստրատուրայի ընդունելության աշխատանքներն իրականացնել սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ապահովելով դիմորդների լիարժեք իրազեկում:
2. ԳՊՀ բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա 2-րդ կիսամյակի դասերը կազմակերպել սահմանված կարգին և ժամանակացույցին համապատասխան:
3. Ապահովել ԳՊՀ-ում ԵՄ «Էրազմուս + Վիրտուալ ճանապարհորդությունների միջոցով ընդգրկուն կարողությունների ձեռքբերում» ծրագրի արդյունավետ իրականացումը և ուսանողների ակտիվ ներգրավումը:

4. Շարունակել ուսման վարձերի հավաքագրման կարգապահության բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ 2025-2026 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության մասին:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովի անդամներ/
2. ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
3. ԳՊՀ 2025-2029թթ. առկա բաժինների բակալավրիատի և 2025-2027թթ. մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների և մասնագրերի վերանայման վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
4. ԳՊՀ 2024-2025 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան, ԱՔ բաժնի վարիչ Օ. Ղազարյան/
5. ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:
/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/
6. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – ԳՊՀ 2025-2026 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության մասին:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովի անդամներ/

Ներկայացվեցին ընդունելության ընթացքը, դիմորդների փաստաթղթերի ընդունման վիճակագրությունը՝ ըստ մասնագիտությունների:

2. **Լսեցին –** ԳՊՀ բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին քննաշրջանի ամփոփ արդյունքները՝ ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների: Արձանագրվեց, որ քննությունների անցկացումն իրականացվել է ԳՊՀ ներքին իրավական նորմերին համապատասխան:

3. **Լսեցին –** ԳՊՀ 2025-2029թթ. առկա բաժինների բակալավրիատի և 2025-2027թթ. մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների և մասնագրերի վերանայման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին ուսումնական պլանների և մասնագրերի վերանայման ուղղությամբ կատարված աշխատանքները: Նշվեց, որ գործընթացում կարևորվել են որակավորումների ազգային շրջանակի պահանջները, աշխատաշուկայի փոփոխվող պայմանները և ԳՊՀ ռազմավարական առաջնահերթությունները:

4.**Լսեցին –** ԳՊՀ 2024-2025 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան, ԱՔ բաժնի վարիչ Օ. Ղազարյան/

Զեկուցողները ներկայացրեցին ԳՊՀ 2024-2025 ուստարվա շրջանավարտների դիպլոմների պատրաստման և հանձնման կազմակերպչական աշխատանքները՝ ընդգծելով շրջանավարտների անձնական տվյալների, փաստաթղթերի ճշգրտության ապահովումը:

5. **Լսեցին** - ԳՊՀ ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեցին ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացիկ ցուցանիշները՝ ըստ կուրսերի և ֆակուլտետների: Քննարկվեցին ուսման վարձերը հավաքագրելու ուղղությամբ ուսանողների հետ տարվող բացատրական աշխատանքների ձևաչափերը և փոխհամագործակցության մեխանիզմները դեկանատների հետ:

6. **Լսեցին–** Ընթացիկ հարց:

ԳՊՀ կազմակերպչական և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:
/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Քննարկվեցին համալսարանի կազմակերպչական և ընթացիկ աշխատանքների հետ կապված մի շարք հարցեր՝ մասնավորապես՝ նյութատեխնիկական հագեցվածության, ուսումնական լսարանների, աշխատասենյակների բարեկարգման վերաբերյալ:

Որոշեցին.

1. ԳՊՀ իրականացրած բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների և մասնագրերի բարելավման համար կազմակերպել քննարկումներ՝ ըստ ամբիոնների և ֆակուլտետների, ներգրավելով գործատուներին:
2. ԳՊՀ 2024-2025 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմները և դրանց հավելվածները պատրաստել սահմանված կարգին համաձայն՝ փաստաթղթերին ներկայացվող պահանջների ճշգրիտ պահպանմամբ:
3. Աշխատանքներ կատարել սովորողների ֆինանսական կարգապահության ապահովման ուղղությամբ:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների մեկնարկի, սովորողների կողմից կամընտրական դասընթացների ընտրության, բակալավրիատում ավարտական աշխատանքների և մագիստրատուրայում՝ թեզերի ղեկավարների հաստատման վերաբերյալ

/զեկուցողներ՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան, դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

2. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի մեկնարկի մասին

/զեկուցողներ՝ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

3. ԳՊՀ մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ

/զեկուցողներ՝ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

4. ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին

/զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների մեկնարկի, սովորողների կողմից կամընտրական դասընթացների ընտրության, բակալավրիատում ավարտական աշխատանքների և մագիստրատուրայում՝ թեզերի ղեկավարների հաստատման վերաբերյալ

/զեկուցողներ՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան, դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրին առկա բաժինների դասընթացների մեկնարկի և նախապատրաստական աշխատանքների, ուսանողների կողմից կամընտրական դասընթացների ընտրության, բակալավրիատում ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի թեզերի ղեկավարների հաստատման մասին ամփոփ տեղեկատվություն: Քննարկվեցին ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման վերաբերյալ դիտարկումներ:

2. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի մեկնարկի մասին

/զեկուցողներ՝ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները, քննությունների ժամանակացույցերը, քննական և կազմակերպչական գործընթացները: Նշվեց, որ քննաշրջանը կմեկնարկի հաստատված ժամանակացույցին համապատասխան, ապահովված են անհրաժեշտ լսարանային պայմանները և վերահսկողության մեխանիզմները: Ընդգծվեց

ուսանողների իրազեկման աշխատանքների կարևորությունը և քննությունների անցկացման կարգապահական պահանջների պահպանումը:

3. **Լսեցին** - ԳՊՀ մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ

Լսեցին /զեկուցողներ՝ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների ընթացքը մագիստրատուրայում: Ներկայացվեցին դասացուցակների կազմման, դասաբաշխման, ինչպես նաև էլեկտրոնային ուսուցման հարթակում համապատասխան առարկայական տիրույթների համալրման ուղղությամբ կատարված աշխատանքները: Քննարկվեցին նաև գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման նախապատրաստական փուլը, մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման գործընթացը:

4. **Լսեցին** - ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին

/զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Զեկուցողը ներկայացրեց ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների՝ ֆակուլտետների, ամբիոնների, այլ ստորաբաժանումների 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունների ներկայացման առաջարկվող ժամանակացույցը: Նշվեց, որ հաշվետվությունները պետք է ներառեն ուսումնական, գիտական, կազմակերպչական, ինչպես նաև որակի ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքների ամփոփ տվյալները: Ընդգծվեց հաշվետվությունների ժամանակին և սահմանված ձևաչափով ներկայացման կարևորությունը՝ ԳՊՀ տարեկան գործունեության ամփոփ վերլուծության, հետագա պլանավորման և ռազմավարական ծրագրերի իրականացման արդյունավետության ապահովման նպատակով:

5. **Լսեցին** - Ընթացիկ հարցեր

ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեց ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ընթացքի վերաբերյալ ամփոփ տվյալներ՝ ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների: Զեկուցողը նշեց, որ հավաքագրման գործընթացը գտնվում է վերահսկողության ներքո, սակայն առկա են ժամկետանց պարտքեր ունեցող ուսանողներ: Ընդգծվեց ուսանողների իրազեկման և դեկանատների հետ համագործակցության

շարունակականության անհրաժեշտությունը՝ ֆինանսական կարգապահության բարձրացման նպատակով:

Որոշեցին.

1. Ապահովել ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպումը՝ հաստատված ուսումնական պլաններին և դասացուցակներին համապատասխան:
2. Հաստատել բակալավրիատում ավարտական աշխատանքների և մագիստրատուրայում մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարներին:
3. Բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանը կազմակերպել հաստատված ժամանակացույցին համապատասխան՝ ապահովելով քննական գործընթացի օբյեկտիվությունը, ակադեմիական պահանջների պահպանումը:
4. Մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքներն ավարտել սահմանված ժամկետներում, ապահովել էլեկտրոնային ուսուցման հարթակում առարկայական տիրույթների լիարժեք համալրումը և պրակտիկաների կազմակերպման պատշաճ ընթացքը:
5. Հաստատել ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցը:
6. Շարունակել աշխատանքներն ուսանողների ֆինանսական պարտավորությունների կատարման կարգապահության բարձրացման ուղղությամբ՝ ուժեղացնելով իրազեկման միջոցառումները:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների ընթացքի, բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի մեկնարկի մասին

/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

2. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/զեկուցող՝ ԳՊՀ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան/

3. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/զեկուցող՝ ԳՊՀ ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյան/

4. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների ընթացքի, բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի մեկնարկի մասին

/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասընթացների կազմակերպման և ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ նշելով, որ ուսումնական գործընթացն իրականացվում է հաստատված դասացուցակներին և ուսումնական պլաններին համապատասխան: Անդրադարձ կատարվեց ուսանողների հաճախումների ցուցանիշներին, ինչպես նաև ուսումնական գործընթացի վերահսկման մեխանիզմներին: Միաժամանակ ներկայացվեց բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի մեկնարկի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն՝ ընդգծելով քննությունների անցկացման ժամանակացույցի և վերահսկողության պահպանման անհրաժեշտությունը:

2. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/զեկուցող՝ ԳՊՀ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան/

Զեկուցողը ներկայացրեց ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը՝ անդրադառնալով դասընթացների կազմակերպման որակին, ուսանողների առաջադիմության ցուցանիշներին, իրականացված գիտահետազոտական աշխատանքներին: Նշվեց, որ ամբիոնը

շարունակել է ակտիվ համագործակցությունը մարզի դպրոցների և այլ կազմակերպությունների հետ՝ մասնագիտական կողմնորոշման և հանրային իրազեկման միջոցառումների շրջանակում: Ներկայացվեցին նաև 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները՝ մասնավորապես՝ կրթական ծրագրերի բովանդակության արդիականացում, ուսումնական նյութերի և էլեկտրոնային ռեսուրսների համալրում, գիտահետազոտական գործունեության ակտիվացում, ուսանողների պրակտիկաների արդյունավետ կազմակերպում, արտաքին շահակիցների հետ համագործակցության ընդլայնում:

3. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/զեկուցող՝ ԳՊՀ ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյան/

Զեկուցողը ներկայացրեց ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը՝ անդրադառնալով ուսումնական բեռնվածության կատարմանը, դասընթացների կազմակերպման արդյունավետությանը, ուսանողների առաջադիմությանը: Անդրադարձ կատարվեց նաև էլեկտրոնային ուսուցման հարթակում դասընթացների նյութերի համալրմանը, ուսանողների ներգրավվածությանը գործնական աշխատանքներում, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնմանն ուսումնական գործընթացում: Ներկայացվեցին 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները՝ կրթական ծրագրերի և դասընթացների բովանդակության արդիականացում՝ հաշվի առնելով ոլորտի ժամանակակից պահանջները, ծրագրավորման, տվյալագիտության և կիրառական մաթեմատիկայի ուղղություններով նոր թեմաների ներառում, լաբորատոր բազայի և տեխնիկական հագեցվածության բարելավում, գիտահետազոտական գործունեության ակտիվացում և ուսանողների ներգրավում գիտական նախագծերում, համագործակցության ընդլայնում ոլորտային կազմակերպությունների և գործատուների հետ:

4. **Լսեցին** - Ընթացիկ հարցեր:

Քննարկվեցին ուսումնական գործընթացի կազմակերպման, էլեկտրոնային ուսուցման հարթակի թերի ռեսուրսների համալրման, ինչպես նաև նյութատեխնիկական բազայի բարելավմանն առնչվող հարցեր:

Որոշեցին.

1. Բակալավրիատի հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանը կազմակերպել սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ապահովելով քննությունների անցկացման օբյեկտիվությունը:
2. ԳՊՀ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:
3. ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:
4. Ապահովել էլեկտրոնային ուսուցման հարթակում առկա թերի կամ բացակա ուսումնական նյութերի համալրումը սահմանված ժամկետներում:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների ընթացքի, հեռակա բաժիններում՝ 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի մասին
   /զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/
2. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում
   /զեկուցող՝ Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Ս. Ամիրխանյան/
3. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում
   /զեկուցող՝ Հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյան/

4. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների ընթացքի, հեռակա բաժիններում՝ 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի մասին

/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասընթացների կազմակերպման և ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Նշվեց, որ դասապրոցեսն իրականացվում է հաստատված ուսումնական պլաններին և դասացուցակներին համապատասխան, ապահովվում է դասընթացների բովանդակային և մեթոդական պատշաճ իրականացումը: Միաժամանակ ներկայացվեցին հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի կազմակերպման, քննությունների անցկացման ժամանակացույցի, ուսանողների մասնակցության և առաջադիմության վերաբերյալ տվյալներ: Ընդգծվեց քննությունների անցկացման կարգապահության և գնահատման օբյեկտիվության ապահովման կարևորությունը:

2. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/զեկուցող՝ Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Ս. Ամիրխանյան/

Զեկուցողը ներկայացրեց ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հիմնական արդյունքները՝ ընդգծելով ուսումնական գործընթացի կազմակերպման, դասավանդման որակի ապահովման, գիտահետազոտական աշխատանքների, ուսանողների հետ տարվող անհատական և խորհրդատվական աշխատանքների ուղղությամբ կատարված աշխատանքները: Անդրադարձ կատարվեց 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններին՝ մասնավորապես ուսումնական ծրագրերի արդիականացում, գործնական բաղադրիչի ուժեղացում, գործատուների հետ համագործակցության խորացում, ինչպես նաև ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնություններ և այլն:

3. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում
   /զեկուցող՝ Հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյան/

   Զեկուցողը ներկայացրեց ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հիմնական արդյունքները՝ անդրադառնալով ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ուսանողների առաջադիմության ցուցանիշներին, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարման գործընթացին: Անդրադարձ կատարվեց 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններին՝ մասնավորապես ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդիականացմանը, էլեկտրոնային ուսուցման ռեսուրսների համալրմանը, գործատուների հետ համագործակցության ընդլայնմանը, ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը:

4. **Լսեցին** - Ընթացիկ հարցեր:

   Քննարկվեցին համալսարանի ուսումնական, գիտական և կազմակերպչական ընթացիկ աշխատանքներին վերաբերող մի շարք հարցեր:

   Անդրադարձ կատարվեց ուսումնական գործընթացի կազմակերպման, փաստաթղթաշրջանառության, ԳՊՀ կայքէջում տեղեկատվության թարմացման, ինչպես նաև ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների միջև համագործակցության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությանը:

Որոշեցին.

1. Հեռակա բաժիններում 2025թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի կազմակերպումն իրականացնել սահմանված կարգին և հաստատված ժամանակացույցին համապատասխան:
2. ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:
3. ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի դասերի, բակալավրիատի հեռակա բաժիններում՝ 2025թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին

   /զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/
2. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

   /զեկուցող՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյան/
3. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

   /զեկուցող՝ Օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ. Միրիբյան/
4. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի դասերի, բակալավրիատի հեռակա բաժիններում՝ 2025թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին

   /զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Զեկուցողները ներկայացրեցին ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա և մագիստրատուրայի 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի մանրամասները: Մասնավորապես՝ անդրադարձ կատարվեց ուսանողների հաճախելիությանը և հեռակա բաժինների քննաշրջանի ընթացքին:

2. **Լսեցին** - ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/զեկուցող՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյան/

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի իրականացրած աշխատանքների արդյունքները՝ ընդգծելով դասավանդման որակի ապահովումը, ուսանողների հետ խորհրդատվական և անհատական աշխատանքների կազմակերպումը, ամբիոնի դասախոսական կազմի ներուժի օգտագործմամբ գիտահետազոտական նախագծերի իրականացումը: Ներկայացվեցին նաև 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները՝ մասնավորապես ուսումնական ծրագրերի արդիականացում, դասընթացների մեթոդական բովանդակության բարելավում և այլն:

3. **Լսեցին** - ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/զեկուցող՝ Օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ. Միրիբյան/

Ներկայացվեց ամբիոնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հիմնական արդյունքները՝ ընդգծելով ուսումնական գործընթացի կազմակերպման, դասավանդման որակի ապահովման, ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվությունների ուղղությամբ կատարված աշխատանքները: Ներկայացվեցին նաև 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները՝ կարևորելով դիմորդների հետ տարվող աշխատանքները, մասնագիտական կողմնորոշման դասընթացների կազմակերպումը:

4. **Լսեցին** - Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ գիտական ամենամյա՝ 28-րդ գիտաժողովի հերթական պրակների գիտական հոդվածների հավաքագրման վերաբերյալ:

/Զեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Զեկուցողը նշեց, որ ԳՊՀ գիտական ամենամյա՝ 28-րդ գիտաժողովի հերթական պրակների գիտական հոդվածների հավաքագրումն ընթացքի մեջ է, ներկայացված հոդվածները հղվել են համապատասխան ամբիոններին գրախոսելու համար:

Որոշեցին.

1. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասընթացների ընթացքը ապահովել հաստատված ուսումնական պլանների և դասացուցակների համաձայն:
2. ԳՊՀ հայոց լեզվի և գրականության և օտար լեզվի և գրականության ամբիոնների 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունները և 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:
3. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի նյութերը հավաքագրելիս, գրախոսելիս և հրապարակելիս՝ խստորեն պահպանել ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի համար ընդունելի պարբերական գիտական հրատարակություններին ներկայացվող 1-ից 20-րդ չափանիշների պահանջները:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասընթացների, հեռակա բաժիններում՝ 2025թ. ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարային շրջանի ընթացքի մասին
/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/
2. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների և իրավագիտության ամբիոնների 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում
/զեկուցող՝ Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Ղաջոյան/
3. ԳՊՀ ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքի մասին

/զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/
4. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժիններում և մագիստրատուրայում 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասընթացների, հեռակա բաժիններում՝ 2025թ. ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարային շրջանի ընթացքի մասին

/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Ներկայացվեցին ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացված աշխատանքները և լուծարային շրջանին մասնակցած ուսանողների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

2. **Լսեցին** - ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների և իրավագիտության ամբիոնների 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/զեկուցող՝ Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Ղաջոյան/

Ներկայացվեց ամբիոնի գործունեության հաշվետվությունը՝ ըստ ուսանողների առաջադիմության, կրթական ծրագրի բարեփոխումների և զարգացումների, ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների, գիտահետազոտական աշխատանքների ուղղվածության, ուսուցման և ուսումնառության կիրառվող մեթոդների ու կառուցակարգերի և այլ ուղղությունների:

3. **Լսեցին** - ԳՊՀ ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքի մասին

/զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների:

4. **Լսեցին**- Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ դասամատյանները պատշաճ կերպով լրացնելու վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին որոշ նկատառումներ՝ ԳՊՀ դասամատյանների պատշաճ կերպով լրացման վերաբերյալ:

Որոշեցին.

1. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների և իրավագիտության ամբիոնների 2024-2025 ուսումնական

տարվա գործունեության հաշվետվություններն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:

2. ԳՊՀ հեռակա բաժիններում 2025թ. ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարային շրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն և աշխատանքներ կատարել ուսանողների առաջադիմության բարձրացման ուղղությամբ:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
Քարտուղար՝ Ք. Հայրապետյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /Զեկուցող՝ ԳՊՀ ՄՌԿ բաժնի վարիչ Խ. Սաֆարյան/
2. ԳՊՀ գրադարանի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /Զեկուցող՝ ԳՊՀ գրադարանի վարիչ Ա. Թորչյան/
3. ԳՊՀ արխիվի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /Զեկուցող՝ ԳՊՀ արխիվի վարիչ Գ. Կարապետյան/
4. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/Զեկուցող՝ ԳՊՀ ՄՌԿ բաժնի վարիչ Խ. Սաֆարյան/

Զեկուցողը նշեց, որ հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ ՄՌԿ բաժինի կողմից վերանայվել և լրացվել են աշխատակիցների անձնական գործերը, նախապատրաստվել են կադրային, վարչական, ժամանակավոր կցագրման, ուսանողական և այլ հրամանների նախագծեր, կնքման են ներկայացվել աշխատանքային պայմանագրեր, համաձայնագրեր, վերանայվել և ուսումնասիրվել է ԳՊՀ աշխատակիցների շարժը, իրականացվել են ուսանողների ընդունման, վերականգման, ազատման, տեղափոխման,

տարկետման, հեռացման ձևակերպումներ և ՄՌԿ բաժնին վերաբերող այլ գործառույթներ:

2. **Լսեցին** - ԳՊՀ գրադարանի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/Զեկուցող՝ ԳՊՀ գրադարանի վարիչ Ա. Թորչյան/

Զեկուցողը ներկայացրեց ԳՊՀ գրադարանի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը՝ անդրադառնալով գրադարանային ֆոնդի համալրման, հաշվառման և դասակարգման, ինչպես նաև ընթերցողների սպասարկման աշխատանքներին: Ներկայացվեցին տվյալներ ուսանողների և դասախոսների կողմից գրադարանային ռեսուրսների օգտագործման ակտիվության, էլեկտրոնային շտեմարանների կիրառման և տեղեկատվական ծառայությունների մատուցման վերաբերյալ: Անդրադարձ կատարվեց հաշվետու ուստարում իրականացված թվայնացման աշխատանքներին, նոր մասնագիտական գրականության ձեռքբերմանը:

Քննարկման ընթացքում կարևորվեց գրադարանի և ամբիոնների համագործակցության ակտիվացումը՝ կրթական և գիտահետազոտական գործընթացների արդյունավետ աջակցման նպատակով:

3. **Լսեցին** - ԳՊՀ արխիվի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /Զեկուցող՝ ԳՊՀ արխիվի վարիչ Գ. Կարապետյան/

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արխիվը շարունակել է աշխատանքները՝ ապահովելով բուհի ողջ արխիվային գործի վարումը, արխիվային փաստաթղթաշրջանառության իրականացումը: 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ արխիվի հետ կապված որևէ դիմում կամ հարցադրում անպատասխան չի մնացել, համակարգվել է արխիվի ընթացիկ գործունեությունը, ապահովվել են արխիվի գործավարության և արխիվային գործի վարումը, սահմանված կարգով կազմակերպվել են արխիվ հանձնվող փաստաթղթերի գրանցումը, հաշվառումը, արխիվացումը և արխիվ մուտքագրված փաստաթղթերի պահպանությունը:

4. **Լսեցին**–Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ ուսանողների կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացքի մասին

/Զեկուցողներ՝ ՀՄՖ և ԲՏՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Ներկայացվեց ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները: **Որոշեցին.**

1. ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման, գրադարանի, արխիվի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություններն ընդունել ի գիտություն և աշխատանքը գնահատել բավարար:
2. Ֆակուլտետների, մասնագիտական ամբիոնների կողմից հետևողական աշխատանքներ իրականացնել՝ դասախոսների գիտահետազոտական գործունեությունը, դասախոս և ուսանող համատեղ հետազոտությունների կատարումը և հրապարակումը խթանելու նպատակով:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ ուսանողական խորհրդի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում /Զեկուցող՝ ՈՒԽ նախագահ Լ. Մանուկյան/
2. ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության 2024-2025 ուսումնական տարվա հաշվետվության և 2025-2026 ուստարվա գործունեության հիմնական ուղղությունների ներկայացում /Զեկուցող՝ ՈՒԳԸ փոխնախագահ Թ. Թադևոսյան/
3. ԳՊՀ 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների հարցման արդյունքների ներկայացում /Զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/
4. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողական խորհրդի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում

/Զեկուցող՝ ՈՒԽ նախագահ Լ. Մանուկյան/

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024-2025 ուսումնական տարում ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները մասնակցել են համալսարանի կառավարման գործառույթներին, անդամակցել համալսարանի հոգաբարձուների խորհրդին, գիտական խորհրդին, ինչպես նաև ֆակուլտետների խորհուրդներին: ՈՒԽՄ-ը նաև ակտիվ համագործակցել է ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև արտահամալսարանական կառույցների, մասնավորապես՝ Գեղարքունիքի մարզային և Գավառի համայնքային գրադարանների հետ՝ իրականացնելով կրթամշակութային միջոցառումներ:

2. **Լսեցին** – ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության 2024-2025 ուսումնական տարվա հաշվետվության և 2025-2026 ուստարվա գործունեության հիմնական ուղղությունների ներկայացում

/Զեկուցող՝ ՈՒԳԸ փոխնախագահ Թ. Թադևոսյան/

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվետու ուստարում ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության աշխատանքներում առաջնային են համարվել մշտական խորհրդատվության տրամադրումն ուսանողներին, ուսանողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը բուհի ղեկավար մարմին:

ՈՒԳԸ-ն իր գործառույթների իրականացման ճանապարհին մշտապես համագործակցել է հայաստանյան այլ բուհերի ուսանողական գիտական կառույցների հետ: ՈՒԳԸ անդամները մասնակցել են թե՛ հանրապետությունում, թե՛ արտերկրում անցկացվող բազմաբնույթ մրցույթների, գիտաժողովների, դասընթացների ու սեմինարների:

4. **Լսեցին** – ԳՊՀ 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների հարցման արդյունքների ներկայացում

/Զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

Ներկայացվեց ԳՊՀ 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը, ուսանողների առաջարկություններն ու նկատառումներն ամփոփիչ ատեստավորման գործընթացը բարելավելու ուղղությամբ:

5. **Լսեցին**–Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ ‹‹learn.gsu.am›› էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա բաժինների կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների ներկայացում:

/Զեկ.՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

Ներկայացվեցին տվյալներ ԳՊՀ ‹‹learn.gsu.am›› էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա բաժինների կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:

Որոշեցին.

1. ԳՊՀ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության 2024-2025 ուսումնական տարվա հաշվետվություններն ընդունել ի գիտություն, և աշխատանքը գնահատել բավարար:
2. 2024-2025 ԳՊՀ բակալավրիատում ավարտական աշխատանքի և մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղել համապատասխան ստորաբաժանումներ, որպեսզի ուսումնասիրվեն, ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն միջոցներ՝ ուսուցման և ուսումնառության արդյունավետության ապահովման, ԳՊՀ-ում բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մասնագետների պատրաստման որակի բարձրացման և արդյունքում՝ շրջանավարտների ու գործատուների գոհունակության ապահովման նպատակներով:
3. Իրականացնել ԳՊՀ ‹‹learn.gsu›› էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա բաժինների կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների համալրման աշխատանքներ:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ արհեստակցական կազմակերպության 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա աշխատանքի հիմնական ուղղությունների ներկայացում

/Զեկուցող՝ ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ Լ. Սիրունյան/

2. ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա աշխատանքի հիմնական ուղղությունների ներկայացում

/Զեկուցող՝ ԳՊՀ ՏՏ բաժնի վարիչ Մ. Հովհաննիսյան/

3. ԳՊՀ ուսանողների ուսման վարձերի վճարման մասին

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

4. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** - ԳՊՀ արհեստակցական կազմակերպության 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա աշխատանքի հիմնական ուղղությունների ներկայացում

/Զեկուցող՝ ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ Լ. Սիրունյան/

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը կանոնադրական խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով շարունակել է ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները համալսարանի աշխատակիցների և ուսանողների համար:

Համալսարանականների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ԳՊՀ արհեստակցական կազմակերպության և համալսարանի ռեկտորի միջև 2025 թվականի օգոստոսի 30-ին վերակնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհեստակցական միությունն ուշադրություն է դարձրել աշխատակիցների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

2. **Լսեցին** - ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2025-2026 ուստարվա աշխատանքի հիմնական ուղղությունների ներկայացում

/Զեկուցող՝ ԳՊՀ SS բաժնի վարիչ Մ. Հովհաննիսյան/

Զեկուցողը ներկայացրեց բաժնի 2024-2025 ուսումնական տարվա կատարված աշխատանքները, ձեռքբերումները՝ ԳՊՀ պաշտոնական կայքէջի հարթակների թարմացման, էլեկտրոնային տեղեկագրի ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքները, ինչպես նաև 2025-2026 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

3. **Լսեցին** - ԳՊՀ ուսանողների ուսման վարձերի վճարման մասին

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ուանողներին ֆինանսական աջակցման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին**–Ընթացիկ հարցեր:

Ուսումնագիտական գործընթացին առնչվող հարցերի ներկայացում:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման հետ:

Որոշեցին.

1. ԳՊՀ արհեստակցական կազմակերպության 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, և աշխատանքը գնահատել բավարար:
2. ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություններն ընդունել ի գիտություն, և աշխատանքը գնահատել բավարար:
3. Հետևել ԳՊՀ առկա և հեռակա բաժինների բակալավրիատի ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքին՝ սահմանված կարգով. ժամանակացույցին համապատասխան և արդյունքների մասին պարբերաբար ներկայացնել հաշվետվություններ:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19
ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրավիրած խորհրդակցության մասին /Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/
2. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ /Զեկուցող՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան/
3. ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ /Զեկուցող՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/
4. ԳՊՀ ուսանողների կողմից ուսման վարձերի վճարման գործընթացի մասին /Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/
5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** - ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրավիրած խորհրդակցության մասին /Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

ԳՊՀ ռեկտորը ներկայացրեց, որ ս. թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրավիրած խորհրդակցության առանցքային հարցը «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքից բխող միջոցառումների իրականացումն էր: Հանդիպմանը նշվել է, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունմանը հաջորդել է ենթաօրենսդրական ակտերի մշակումը, որի ուղղությամբ աշխատանքներն արդեն մեկնարկել են, և որոշ իրավական ակտերի նախագծեր արդեն իսկ ներկայացված են հանրային քննարկման:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև Հայաստանում գիտական աստիճանաշնորհման նոր համակարգի ներդրմանը, որի նախագիծը ևս հանրային քննարկման փուլում է գտնվում՝ առաջարկելով միջազգային չափանիշներին համադրելի կարգավորում:

2. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ

/Զեկուցող՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման, ժամկետների, գիտական ղեկավարների գործառույթների կատարման վերաբերյալ:

3. **Լսեցին** - ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ

/Զեկուցող՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման հետ:

4. **Լսեցին** - ԳՊՀ ուսանողների կողմից ուսման վարձերի վճարման գործընթացի մասին

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Զեկուցողը, ըստ ԳՊՀ առկա և հեռակա բաժինների, ներկայացրեց ուսանողների ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ մանրամասնություններ և առաջարկվեց ուսման վարձավճարների պարտքեր ունեցող ուսանողների հետ տանել համապատասխան աշխատանքներ՝ վարձերը ամենամսյա պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը բանկային փոխանցումներով վճարելու ուղղությամբ:

1. **Լսեցին**–Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ գիտական պարբերականի 19-րդ և 20-րդ պրակների հրատարակման և 29-րդ գիտաժողովի կազմակերպման աշխատանքների վերաբերյալ

/Զեկուցող՝ ԳՊՀ ԱՔԲ վարիչ Օ. Ղազարյան/

Զեկուցողը նշեց, որ ԳՊՀ 28-րդ գիտաժողովին զեկուցված և հրապարակման երաշխավորված գիտական հոդվածների 19-րդ և 20-րդ պրակներն արդեն

տպագրման փուլում են, իսկ 29-րդ գիտաժողովի կազմակերպման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Որոշեցին.

1. Հետևել ԳՊՀ առկա և հեռակա բաժինների բակալավրիատի ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքին ու ժամկետներին, պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել արդյունքների մասին:
2. ԳՊՀ 29-րդ գիտաժողովն անցկացնել 2026թ. մայիսի 2-3-ը՝ զուգակցված (առկա-առցանց) ձևաչափով:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20
ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների առկա բաժիններում տարեկան ուսումնական պլանների կատարման ընթացքի, ստուգարքների անցկացման, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ստուգման, 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման վերաբերյալ
/Զեկուցողներ՝ ԳՊՀ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/
2. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների հեռակա բաժիններում 2026թ. ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստման մասին
/Զեկուցողներ՝ ԳՊՀ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/
3. ԳՊՀ ուսանողների կիսամյակային ուսման վարձերի վճարման մասին
/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/
4. Ընթացիկ հարցեր

2. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների առկա բաժիններում տարեկան ուսումնական պլանների կատարման ընթացքի, ստուգարքների անցկացման,

ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ստուգման, 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման վերաբերյալ

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման, ժամկետների պահպանման, դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարման վերաբերյալ:

3. **Լսեցին** - ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների հեռակա բաժիններում 2026թ. ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստման մասին

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ԲՏՖ և ՀՄՖ դեկաններ Մ. Ավագյան, Թ. Ասոյան/

Ներկայացվեցին ԳՊՀ հեռակա բաժինների 2026 թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև քննարկվեցին դասամատյանների լրացման և ուսանողների հաճախելիության վերահսկողության վերաբերյալ որոշ նկատառումներ:

4. **Լսեցին** - ԳՊՀ ուսանողների կիսամյակային ուսման վարձերի վճարման մասին

/Զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ուանողներին ֆինանսական աջակցման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

5. **Լսեցին**–Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ ‹‹learn.gsu.am›› էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա բաժինների կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների ներկայացում:

/Զեկ.՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

Ներկայացվեցին տվյալներ ԳՊՀ ‹‹learn.gsu.am›› էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա բաժինների կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:

Որոշեցին.

1. Հանձնարարել ԳՊՀ ակադեմիական քաղաքականության և որակի ապահովման բաժիններին՝ ստուգել առկա բաժիններում տարեկան ուսումնական պլանների կատարման, ստուգարքների անցկացման,

ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման ընթացքն ու համապատասխանությունը ժամանակացույցին,

2. Իրականացնել հեռակա բաժիններում ուսումնական գործընթացի նախապատրաաստում՝ սահմանված կարգով և ժամանակացույցով,
3. Աշխատանքներ կատարել ուսանողների շրջանում՝ ուսման վարձերը ամենամսյա պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը բանկային փոխանցումներով վճարելու նպատակով:
4. Իրականացնել ԳՊՀ ‹‹learn.gsu›› էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա բաժինների կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների համալրման աշխատանքներ:

Ռեկտոր՝ **Ռ. Հակոբյան**
Քարտուղար՝ **Ք. Հայրապետյան**